Կարապետին և Սուրբ Խաչին, և է անապատ կրօնաւորաց։ Եւ իմ անդ եղեալ կրեցի բազում վիշտս» (ՄՁ. Թ. 1620։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՎՐԴ.— Մբ. աշկ. Եղիազար կթղ.ին և Ա.ռ. Թէքիրտաղի (1666—1676). Աբրահամ կթղ. Թէքիրտաղցիներու ուղղած իր մէկ կոնդակին մէջ Նիկողայոս վրդ.ի համար հետևեալը կը գրէ. «Հանգուցեալ տէր Սրբազան Եղիազար կաթողիկոսն զիւր ձեռնասուն և զհաւատարիմ աշակերտն զՆիկողայոս վրդ.ն կարգեաց ձեզ տեսուչ. և որ բարեպէս հովուելով զձեզ տասն ամ հանգեաւ ի Քրիստոս, որ այժմ ակներև տեսանի արձանագիր գերեզմանի ի տապանաքարին» (Սիօն, 1876 էջ 73)։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՎՐԴ. ՊՈՂՍԵՑԻ.— Գրիգոր պտրք. Պարոնտէրի ժամանակ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կը մասնակցի ընդհանուր նուիրատուութիւններու։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՎՐԴ. ՖՌԱՆԿԻԼԵԱՆ, ԱՄԱՍԻԱՑԻ.— Ծ. 1860 ին. Ձռ. 1881ին. շինուածապետ 1889ին. ՏՅ. (1890—91). ՏՊ. (1892—995). կը հրաժարի միաբանութենէն 1895ին. Ա.ռ. փոխանորդ Ամասիոյ և Բալուի (1896—1909). կը վերադառնայ Ս. Յակոբի վանքը և բ. անգամ ՏՊ. (1910—12), ուր կը վախճանի 1912ին։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՔՀ.— 1636ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, և Ս. Յարութեան տաճարին կը նուիրէ 1300 թուականով և Կիլիկեցի Ստեփանոս քհ.ի գրչութեամբ ձեռագիր Աստուածաշունչի մը պատմ. մասերը (Եսթեր, Յուդիթ, Տովբիթ և Գ. Մակաբայեցիք (ՄՁ. Թ. 369), և նոյն ձեռագիրը նորոգել կուտայ «սուտանուն Ստեփաննոս կաղմողի»։

ՆՈՐԱՅՐ Ա.Բ. ՊՈՂԱՐԵԱՆ, ԱՅՆԹԱՊՅԻ.— Մբ. որդի Գարեգին քհ.ի. Ծ. 1904 Յունվար 17ին Այնթապի մէջ. աւագանի անունն է Ադամ-Նորայր. Նախնական կրթութիւնը առած է Վարդանեան կրթարանին մէջ. ծնողաց հետ տարագրուած է Սիբիր, ուրկէ վերադարձած է հայրենիք և շարունակած է ուսումը. 1922 Օգստ. 2ին կը մտնէ Ժառ. Վարժ.ը, 1924 Յլս. 22ին կ'աւարտէ դպրոցական շրջանը։ 1925ին գրապետ և ուսուցիչ Ժառ. Վարժ.ի։ Նոյն տարին կը ձեռնադրուի սրկ. և 1928 Յուլիս 22, Վարդավառին՝ աբեղայ և միևնոյն ժամանակ կը շարունակէ իր ուսումը մասնակի դասերով։ Նորայր Ա.Բ. իր բա-